

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ



РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
МАРЗПЕТ АРМАВИРА

<< ---- >> -----2018թ.

N -----

**<<Հեղաքննող լրագրողներ>> ՀԿ-ի
<<Հեղք>> թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանին**

Հարգելի պարոն Բալասանյան

Ի պատասխան Ձեր 19.03.2018 թ. գրության, հայտնում ենք, որ 2017 թվականի սեպտեմբերի 22-ին ՀՀ Արմավիրի մարզի Շահումյանի թ/Ֆ համայնքի ղեկավար Արթուր Յալոյանի ղիմում է ներկայացրել համայնքի ավագանուն՝ համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ:

2017 թվականի սեպտեմբերի 25-ի համայնքի ավագանու թիվ 8 արձանագրությունը, որի համաձայն համայնքի ղեկավարի լիազորությունները համարվել են դադարեցված, սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2018 թվականին Արմավիրի մարզում տեղի է ունենալու համայնքների միավորում, և տեղական ընտրությունները նշանակվում և անցկացվում են տարեկան երկու անգամ, Տարածքային կառավարման նախարարությունը և Արմավիրի մարզպետարանը նպատակահարմար են գտել նշված համայնքի ղեկավարի ընտրություններն իրականացնել միավորված համայնքների ղեկավարների ընտրության օրը: Մինչ այդ համայնքի ընդհանուր կառավարումն կիրականացվի է համայնքի ղեկավարի պաշտոնակատարի միջոցով:

Միաժամանակ հայտնում ենք, որ Շահումյան թ/Ֆ համայնքը մարզում հանդիսանում է միակ համայնքը, որը ՀՀ Արմավիրի մարզպետարանի անմիջական հսկողության ներքո ղեկավարվում է համայնքի ղեկավարի պաշտոնակատարի կողմից:

Հավելենք նաև, որ համայնքի 2017 թվականի հողի հարկի հավաքագրման առաջադրանքը կատարվել է 100,3%-ով, իսկ սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշները կազմել է 202,6%:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ



Կատ.՝ Ա.Ղուկասյան
0237 2-76-49